ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Պողոսյան Վահագն Ռաֆաելի

ՀՀ ինովացիոն ներուժի գնահատման հիմնախնդիրները

Ը.00.02-«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2016

© National Library of Armenia OCR by Portmind

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ **Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր**
Աշոտ Հակոբի Բայադյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր**
Միքայել Սերգեյի Մելքումյան
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Արման Ալբերտի Սարգսյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2016թ. մայիսի 12-ին ժամը 14:00 -ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ –ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, 0025, Նալբանդյան 128

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. ապրիլի 11-ին:

014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Ս. Ա. Գևորգյան

© National Library of Armenia

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Ուսումնասիրվող թեմայի արդիականությունը: Արդեն XX դարի 2-րդ կեսին, կապված գիտության և տեխնիկայի արագընթաց զարգացումների հետ, տնտեսական զարգացումները դարձան խիստ հակասական ու անկանխատեսելի: Արդյունքում պարզ դարձավ, որ կտրուկ փոփոխվում է սպառողական պահանջարկը և անհրաժեշտություն է դառնում շուկա դուրս բերել նոր ու առավել որակյալ արտադրանք: Ժամանակակից տնտեսական պայմաններում ինովացիոն գործունեությունը համարվում է պետությունների տնտեսական աճը ապահովող գլխավոր գործոններից մեկը, իսկ ինովացիոն ոլորտը՝ զարգացման գերակա ուղղությունը: Միաժամանակ զարգացած տնտեսությամբ երկրների տնտեսական զարգացման հետազոտելիս ակնհայտ է դառնում, որ ինովացիոն գործընթացը սկսվում և ավարտվում է շուկայում, սակայն վերջինս ինքնին անկարող է արդյունավետ լուծելու արդեն ծագող համակարգային խնդիրները: Վերջիններս հիմնականում լուծվում են պատկան մարմինների կողմից, բայց միամտություն կլիներ ենթադրել, որ այս ոլորտում գլխավոր դերը պատկանում է պետությանը: Խնդիրն առավել կարևորվում է բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ցածր եկամուտներով երկրներում, որտեղ տնտեսության դիվերսիֆիկացումը և նոր ճյուղերի զարգացումը հանդիսանում է կարևորագույն հիմնախնդիրներից մեկը: Ժամանակակից ինովացիոն տնտեսության արդյունավետ աշխատանքը ենթադրում է ինովացիոն մեխանիզմների և գործիքների, տեղեկատվական ենթակառուցվածքների ու վենչուրային բիզնեսի համակարգային ու ծրագրավորված մոտեցումներ: Համակարգված մոտեցումը նշանակում է, որ տնտեսության ճյուղերից և ոչ մեկը հնարավոր չէ զարգացնել առանց նրա համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ու բացի այդ ոլորտի առանձնահատկությունները հաշվի առնելու: Լինելով տնտեսական տարբեր գործոնների համախումբ՝ տնտեսության ինովացիոն ներուժի գնահատումը չի կարող լիովին հավաստի արդյունք ապահովել առանց դրա վրա ազդող գիտատեխնիկական և արտադրական գործոնների համախմբված վերլուծության, քանի որ տնտեսության յուրաքանչյուր ոլորտի ներուժը կարող է ձգտել առավելագույնին միայն մնացած ոլորտներում բարենպաստ իրավիճակի առկայության պարագայում: Ուստի, յուրաքանչյուր տնտեսության ինովացիոն ներուժի գնահատման նախապայման պետք է հանդիսանա նրա կառուցվածքային տարրերի տարանջատումը, որը հնարավորություն կընձեռի վերհանել նրանցում առկա փոխառնչությունները և ազդեցության ոլորտները:

Միաժամանակ զարգացող տնտեսությամբ երկրներում ինչպիսին ՀՀ-ն է տնտեսության դիվերսիֆիկացումն ու տնտեսության մրցակցային ճյուղերի զարգացումը կարևորագույն խնդիրներից մեկն է[1], մասնավորապես այն առումով, որ ՀՀ-ը, գտնվելով անցումային փուլում, ոչ միայն կորցրեց տնտեսության գիտատեխնիկական հենքը, այլև չկարողացավ ինտեգրվել վերոնշյալ տնտեսական գործընթացներին՝ դրանով իսկ մեծացնելով արդեն իսկ գոյություն ունեցող տեխնոլոգիական խզվածքը Հայաստանի և

[1] Սուվարյան Յ., Չոբանյան Մ. - <<Տնտեսության տարածքային կառավարում: Մեթոդաբանությունը և հիմնախնդիրները>> Եր. 2007, էջ 312

© National Library of Armenia

զարգացած տնտեսությամբ երկրների միջև:

21-րդ դարի սկզբից տեխնոլոգիական գործընթացների մասսայականացումը նոր հնարավորություն ստեղծեց ՀՀ տնտեսության տեխնոլոգիական վերազինման համար: Ուստի հեռանկարային տեխնիկատնտեսական զարգացմանն անցնելու համար կարևորվում է ազգային ինովացիոն համակարգի ստեղծումը[2], որին հետամուտ լինելը և արդյունավետ իրականացումը կնպաստի երկարաժամկետ տնտեսական աճի ապահովմանը:

Վերոնշյալ հիմնախնդիրների հետազոտության և դրանց լուծումների բացահայտման ու հիմնավորման հրատապությունն էլ պայմանավորել է աշխատանքի թեմայի ընտրությունը ու կատարման անհրաժեշտությունը:

Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը: Ինովացիոն ներուժը, որպես տնտեսության բնականոն զարգացման հիմնական գործոն, տնտեսագետների ուշադրության կենտրոնում է շուրջ երեք տասնամյակ: Այս մոտեցման տարածմանը առավել նպաստեց էնդոգեն տնտեսական աճի մոդելների մշակումն ու կիրառումը, որոնց հիմնական առանձնահատկությունն այն է, որ նրանց հիմքում ընկած մոդելներում գիտատեխնիկական առաջընթացը դիտարկվում է ոչ միայն որպես տվյալ տնտեսական համակարգը բնորոշող ստատիկ գործոն, այլև հնարավորություն է ստեղծում գնահատել դրա փոփոխման ազդեցությունը տնտեսական գործընթացների զարգացման վրա: Այս տեսության հետևորդների կողմից մշակված աշխատությունները մեծապես պարզաբանում են ինովացիոն ներուժի զարգացման անհրաժեշտությունը կայուն տնտեսական աճ ապահովելու տեսանկյունից: Արտասահմանյան տնտեսագետների աշխատություններում պարզաբանվում են ինչպես ինովացիոն ներուժի զարգացման առանձնահատկությունները՝ կախված տնտեսության զարգացվածության աստիճանից, այնպես էլ առաջարկվում են զարգացող տնտեսությամբ երկրներում ազգային ինովացիոն համակարգերի՝ առավել արագ և արդյունավետ ներդրման տարատեսակ մոտեցումներ:

Միաժամանակ տնտեսական համակարգի կարգավորման ու տնտեսության առանձին ճյուղերի զարգացման (այդ թվում՝ գիտելիքահենք տնտեսության կառուցման, գիտակրթական համակարգի կայացման, մարդկային կապիտալի զարգացման) հիմնահարցերի ուսումնասիրության հարցում մեծ ավանդ ունեն նաև ՀՀ ուսումնական ու գիտական հաստատությունների մասնագետների հետազոտական աշխատությունները, տպագրված գիտական հոդվածները, ոլորտի զարգացմանը վերաբերող զեկույցները և այլն:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Աշխատանքի հիմնական նպատակն է բացահայտել ՀՀ ինովացիոն ներուժն ու վերհանել նրա գնահատման հիմնախնդիրները: իսկ այդ նպատակին հասնելու համար աշխատանքում կարևորվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել ու գնահատել ինովացիոն ներուժի դերը տնտեսական աճի ապահովման գործընթացներում,

[2] Վարդանյան Գ. <<Գիտելիքահենք տնտեսություն, հնարավորություններ և մարտահրավերներ>> - Եր. 2008, 402 էջ

© National Library of Armenia

- վերլուծել ինովացիոն ներուժի գնահատման ու զարգացման միջազգային փորձը,
- ուսումնասիրել ինովացիոն ներուժի գնահատման մեթոդներն ու տալ ՀՀ տնտեսության ինովացիոն հատվածի համեմատական գնահատականը,
- հետազոտել ՀՀ ինովացիոն ոլորտի զարգացմանը խոչընդոտող կառուցվածքային ու համակարգային գործոնները,
- բացահայտել ինովացիոն ներուժի զարգացումն ապահովող գործոններն ու դրանց ազդեցության քանակական բնութագիրը՝ տնտեսամաթեմատիկական մեթոդների օգտագործմամբ,
- ուսումնասիրել ՀՀ տնտեսության ինովացիոն ոլորտի ժամանակակից պատկերն ու ոլորտն ապահովող օրենսդրական և իրավական դաշտը,
- դասակարգել ՀՀ տնտեսության ճյուղերն ըստ ինովացիոն ներուժի զարգացման առաջնահերթության ու նպատակահարմարության,
- ուրվագծել ՀՀ ինովացիոն ոլորտի զարգացման և ազգային ինովացիոն համակարգի կայացման հնարավոր տեսլականը։

Հետազոտության օբյեկտը ՀՀ ինովացիոն ներուժն է ու դրա զարգացմանը խոչընդոտող համակարգային ու կառուցվածքային գործոնները։

Հետազոտության առարկան ՀՀ ազգային ինովացիոն համակարգի կայացման հիմնահարցերն են ու դրա արդյունավետ կառուցման արդյունքում ՀՀ երկարաժամկետ տնտեսական աճի ապահովումը։

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծման համար տեսական հիմք են հանդիսացել տնտեսագիտության դասական և ժամանակակից տեսությունների դրույթները, զարգացած ու անցումային երկրների տնտեսական քաղաքականությանը վերաբերող հայ և օտարերկրյա հետազոտողների ուսումնասիրությունները, միջազգային կազմակերպությունների և փորձագետների վերլուծությունները, գիտամեթոդական ու ռազմավարական մշակումները։

Աշխատանքում կիրառվել են տեսական և տրամաբանական, վիճակագրական և համեմատական վերլուծության տարբեր մոտեցումներ ու մեթոդներ։

Աշխատանքի համար տեղեկատվական հիմք են հանդիսացել տնտեսական գործունեությանն առնչվող ՀՀ և այլ պետությունների վիճակագրական ծառայությունների տվյալները, «ՀՀ ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամի, միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից հրապարակված հաշվետվությունները, զեկույցները, պաշտոնական տեղեկագրերն ու փորձագիտական գնահատականները։

Հետազոտության գիտական նորույթը: Աշխատանքում իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա ստացված արդյունքներից որպես գիտական նորույթ, հատկապես, կարևորվում են հետևյալները՝

- Ուսումնասիրվել և միջազգային փորձին համահունչ բացահայտվել են երկրների ինովացիոն զարգացման 3 մոտեցում և էնդոգեն տնտեսական աճի մոդելների և կատարված քանակական վերլուծությունների արդյունքներով հիմնավորվել է ընտրված մոտեցմանը համապատասխան ՀՀ ազգային ինովացիոն համակարգի ստեղծման անհրաժեշտությունը։

© National Library of Armenia

- Բացահայտվել և վերլուծվել է ինովացիոն ներուժի վրա ազդող գործոնների քանակական գնահատականը էկոնոմետրիկ մոդելների կիրառմամբ, և հիմնավորվել է երկրի ինովացիոն ներուժի ազդեցությունը բնակչության տարբեր եկամտային խմբերի և եկամուտների բաշխվածության վրա:
- Վերլուծվել է ՀՀ ինովացիոն ներուժի զարգացմանը խոչընդոտող համակարգային ու կառուցվածքային գործոնների պատճառահետևանքային կապերը և առաջարկվել են դրանց հաղթահարման մեխանիզմներ:
- Բացահայտվել ու հիմնավորվել է ՀՀ տնտեսության կլաստերային վերլուծության արդյունքում առանձնացված ճյուղերի զարգացմամբ ինովացիոն ներուժի գնահատման հիմնախնդիրների վերացման առաջնահերթությունը և որին համահունչ կազմվել է ՀՀ ինովացիոն ներուժի գնահատականի բարձրացման հնարավոր տեսլականը:

Ատենախոսության տեսական ու կիրառական նշանակությունը: Ատենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրությունների, քանակական վերլուծությունների արդյունքները, կատարված եզրակացությունները և առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ պետական մակրոտնտեսական քաղաքականության պլանավորման, ինովացիոն հատվածի զարգացման գերակայությունների որոշման և այդ ոլորտում անհրաժեշտ իրավական ու օրենսդրական փոփոխությունների կարգավորման ժամանակ: Ստացված արդյունքները կարող են նաև նպաստել անհրաժեշտ ռեսուրսների ներգրավման հայեցակարգերի մշակմանը և տվյալ ոլորտում ընդգրկված փոքր գիտատար ընկերությունների ու խոշոր կազմակերպությունների գործունեության զարգացման համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումն ու հրապարակումները: Աշխատության հիմնական դրույթները, կատարված հետազոտությունների արդյունքներն ու առաջարկությունները ներկայացվել ու քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում, իսկ արդյունքները հրապարակվել են հեղինակի 5 գիտական հոդվածներում:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածական մասից, 3 գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատությունը շարադրված է 149 մեքենագիր էջի վրա ներառյալ օգտագործված գրականության ցանկը, պարունակում է 14 գծապատկեր, 4 աղյուսակ, 4 հավելված, 109 անուն գրականության ցանկ և 30 համացանցային կայք:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածական մասում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության տեսամեթոդաբանական ու տեղեկատվական հիմքերը, հիմնական գիտական նորույթը, արդյունքների տեսական ու գործնական նշանակությունը, հետազոտության փորձարկումն ու հրապարակումները, ինչպես նաև հետազոտության կառուցվածքը:

Հետազոտության առաջին՝ «**Ինովացիոն ներուժի դերը տնտեսական աճի**

© National Library of Armenia

ապահովման գործընթացներում և նրա գնահատման ու զարգացման միջազգային փորձը», գլխում վերլուծվել է ինովացիոն ներուժի հասկացությունը, կառուցվածքային տարրերը և կիրառությանը տնտեսական աճի մոդելներում: Միևնույն ժամանակ վերլուծվել է ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող տնտեսությամբ երկրներում ինովացիոն ներուժի զարգացման և օգտագործման միջազգային փորձն ու կիրառված գործիքակազմը:

Ինովացիոն ներուժի և նրա կառուցվածքային մասնիկների հստակ սահմանումները միանշանակ չեն և տարբեր մասնագետների կողմից տարբեր մեկնաբանությունների են արժանանում: Այս տեսանկյունից ինովացիոն ներուժի առավել ամբողջական և հստակ սահմանում է տրվում Գ. Ի. Ժիցի կողմից[3], համաձայն որի ինովացիոն ներուժ ասելով պետք է հասկանալ տնտեսական ռեսուրսների այն համախումբը, որը ժամանակի ցանկացած պահին կարող է օգտագործվել հասարակության կողմից և ուղղվել նրա հետագա զարգացմանը: Վերոնշյալ հանգամանքը թույլ է տալիս ինովացիաները դիտարկել որպես տնտեսական աճի որակական գործոն[4,5,6] ու դիտարկել նրա դերն ու նշանակությունը երկարաժամկետ կայուն տնտեսական աճի ապահովման տեսանկյունից: Այս նպատակով աշխատության շրջանակներում դիտարկվել են տնտեսական աճի էնդոգեն մոդելները, որոնց ուսումնասիրության արդյունքում կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին՝

- *Մարդկային կապիտալի զարգացումը և նորագույն գիտելիքների հասանելիության ապահովումը բնակչության լայն շերտերին ինովացիոն գործունեության ճանապարհով տնտեսական կայուն աճ ապահովելու պարտադիր պայմաններից մեկն է:*
- *Առավելագույն տնտեսական աճ ապահովելու նպատակով անհրաժեշտ է պետական վերահսկողություն սահմանել ինովացիոն տեխնոլոգիաների արտադրության ոլորտում գործող մասնավոր ընկերությունների թվի, նրանց կողմից մշակվող տեխնոլոգիաների նկատմամբ հեղինակային իրավունք սահմանելու և ոլորտում կատարվող մասնավոր ներդրումների նկատմամբ:*
- *Չնայած մասշտաբի էֆեկտի առկայության մասին վկայող էմպիրիկ հետազոտությունների բացակայությանը, ինովացիոն տեխնոլոգիաների ոլորտում օգտագործվող ռեսուրսների, մասնավորապես որակավորված աշխատուժի, քանակական աճը զարգացող երկրներում տնտեսական աճի բարձր ցուցանիշներ գրանցելու առավել շատ հնարավորություններ է ստեղծում:*
- *Էնդոգեն տնտեսական աճի մոդելներում մեծամասամբ մերժվում է պետական*

[3] Жиц Г. И: “Способности и возможности: рассуждения о некоторых аспектах методологии оценки влияния инновационного потенциала на развитие социально-экономических систем различного уровня сложности” - Инновации 2008, № 11 стр. 102-107

[4] Васильева З. А., Лихачёва Т. П.: Монография “Инновационные факторы экономического роста территорий” - Красноярск: Сиб. федер. ун-т, 2012, 108 с

[5] Шевченко И. К.: “Инновационные детерминанты неравномерности экономического пространства: методика оценки и факторы преодоления” – Т., Региональная экономика: теория и практика 2009, № 16, С. 21–25.

[6] Թավադյան Ա., Թևիկյան Ա. <<Հայաստանի Հանրապետության տնտեսության մրցունակության ու Նորարարության հիմնախնդիրները և դրանց ազդեցության գնահատումը տնտեսական աճի վրա>> Եր.: Տնտեսագետ հրատարակչություն, 2014.-84 էջ

© National Library of Armenia

ինովացիոն քաղաքականության երկարաժամկետ ազդեցությունը տնտեսական աճի վրա, սակայն ակնհայտ է պետության դերը գիտելիքների հասանելիության ապահովման և ինովացիոն հետազոտությունների ընդունելի ուղղությունների սահմանելու վրա:

- *Առանձնացվում է ինովացիոն զարգացման երկու ուղղություններ՝ ուղղահայաց և հորիզոնական: Արտադրվող տեխնոլոգիաների տեսականու ավելացումը կարող է կարճաժամկետ հատվածում ապահովել եկամուտների և ներդրումների ներհոսք, սակայն արդեն զարգացման որոշակի կետից պետության հիմնական նպատակակետը պետք է հանդիսանա արտադրվող տեխնոլոգիաների որակական աճի ապահովումը:*
- *Անցումային ժամանակաշրջանում բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ցածր եկամուտներով երկրներին առավել նպատակահարմար է կրկնօրինակել բարձր եկամուտներով երկրներում արտադրվող տեխնոլոգիաները:*
- *Պետական քաղաքականությունը պետք է խթանի փոքր գիտատար ընկերությունների ստեղծմանը, այնուհետև, մրցակցային պայմաններ և բավարար սպառողական շուկա ստեղծելով, ապահովի նման ընկերությունների կայուն աշխատանքը, ինչն իր հերթին կհանգեցնի տնտեսության զարգացմանը:*



Գծապատկեր 1.3.1: Ազգային ինովացիոն համակարգի կայացման գործիքակազմն ըստ երկրների[8]

© National Library of Armenia

Աշխատության առաջին գլխում դիտարկվել է նաև **Ինովացիոն ներուժի գնահատման ու զարգացման միջազգային փորձը** և առանձնացվել տնտեսության ինովացիոն հատվածի զարգացման և ազգային ինովացիոն համակարգի կայացման երեք սցենար: Ըստ որոնց, եթե զարգացած տնտեսությամբ, երկրներում որոնք ունեն կայուն մրցակցային դաշտ և արդյունավետ տնտեսական ենթակառուցվածքներ, մասնավոր ընկերություններն իրենք են ձգտում ինովացիաների ստեղծմանն ու ներդրմանը՝ իրենց կողմից առաջարկվող ապրանքներն ու ծառայություններն առավել մրցակցային դարձնելու համար, ապա մյուս երկրներում տնտեսության ինովացիոն հատվածի զարգացումը մեծապես կախված է պետության կողմից իրականացվող քաղաքականությունից, որն իր հերթին ուղղվում է կամ ինովացիոն տեխնոլոգիաների ստեղծմանը (առաջարկի խթանում), կամ՝ շուկայում գործող մասնավոր ընկերությունների հետ համագործակցության արդյունքում համապատասխան միջավայր է ստեղծում ինովացիոն տեխնոլոգիաների ներդրման համար (պահանջարկի խթանում): Ուշադրի զարգացման միջազգային փորձն ուսումնասիրելով, հանգում ենք այն եզրակացության որ ՀՀ տնտեսական համակարգի պայմաններում առավել արագ և արդյունավետ միջոց է ազգային ինովացիոն համակարգի կայացումը ինովացիոն տեխնոլոգիաների նկատմամբ պահանջարկի խթանմամբ:

Գծապատկեր 1.3.1-ում պատկերված է քննարկված միջազգային փորձի ամփոփ նկարագիրը, ինչպես ներկայացված երկրների, այնպես էլ ՀՀ-ի համար: Գծապատկերում մգեցված դաշտերը ցույց են տալիս տվյալ տնտեսական գործիքի օգտագործումը ԱԻՀ-ում:

Ատենախոսության երկրորդ՝ **«Ինովացիոն ներուժի գնահատման մոտեցումներն ու նրա զարգացմանը խոչընդոտող գործոնները ՀՀ-ում»,** գլխում նկարագրված է ինովացիոն ներուժի գնահատման մեթոդների նկարագրությունը, ինչպես նաև ինովացիոն ներուժի վրա ազդող սոցիալ-տնտեսական (կառուցվածքային) ու համակարգային գործոնների վերլուծությունը ՀՀ տնտեսության օրինակով:

Ժամանակակից պայմաններում զարգացած երկրների ինովացիոն ներուժը չափվում է բազմաթիվ ինդեքսների միջոցով, որոնք ընդգրկում են տվյալ երկրները բնութագրող զանազան ցուցանիշներ, որոնցից ամենահամապարփակ գնահատականը INSEAD Համաշխարհային Ինովացիոն Ինդեքսն է (Global Innovation Index (INSEAD)[7]), որը բաղկացած է 84 փոփոխականներից, որոնք միավորված են յոթ ենթաինդեքսներում:

Համաձայն այս մեթոդի՝ սկզբում հաշվարկվում են ընտրված երկրի գնահատականներն ըստ յուրաքանչյուր ենթաինդեքսի, այնուհետև հաշվարկվում է վերջնական գնահատականը, որը ստացված արդյունքների միջին կշռվածն է: Համաձայն 2015թթ. հրապարակված ցուցանիշների՝ այս ցուցանիշով առաջինը Շվեյցարիան է՝ 68.30 միավորով, իսկ Հայաստանը 142 երկրների մեջ, 2013թ-ի համեմատ նահանջելով 2 կետով, 61-րդն է ՝ 37.31 միավորով:

Ուսումնասիրելով Համաշխարհային Ինովացիոն Ինդեքսի բաղադրիչները՝ պարզ է

[7] Indead Համաշխարհային Ինովացիոն Ինդեքս - https://www.globalinnovationindex.org

[8] Գծապատկեր 1.3.1-ը կազմված է հեղինակի կողմից

© National Library of Armenia

դառնում, որ դրանց հիմնական մասը, ինչպիսիք են մարդկային կապիտալի օգտագործման բարձր արդյունավետությունը, մտավոր սեփականության գրանցումը և պաշտպանությունը, տեղեկատվական ծառայությունների արտահանումը, Հայաստանը ոչ միայն առաջատար է տարածաշրջանում, այլև չի զիջում մի շարք առաջատար երկրներին: Արդյունքում, հարց է առաջանում, թե ինչու ինովացիոն այսպիսի լուրջ ներուժ ունեցող երկիրը չի կարողանում ծառայեցնել այդ ներուժը առավել մրցունակ տնտեսություն կառուցելու գործին: Դիտարկելով Համաշխարհային Ինովացիոն Ինդեքսի բաղադրիչները և համեմատելով Հայաստանի ցուցանիշները զարգացած տնտեսությամբ երկրների, ինչպես նաև Վրաստանի և Ադրբեջանի նույն ցուցանիշների հետ՝ կարելի է հանգել հետևյալին.

- Հայաստանի բարձր դիրքն ըստ Համաշխարհային Ինովացիոն Ինդեքսի մեծամասամբ պայմանավորված է ՀՀ-ում մարդկային կապիտալի բարձր ներուժով (Հայաստանը բարձր դիրք է գրավում այնպիսի ցուցանիշներով, ինչպիսիք են ճանաչված գիտական ամսագրերում տպագրված գիտական հոդվածների թիվը, ինտերնետային ծառայությունների բարձր որակը, տեղեկատվական ծառայությունների արտահանումը և այլն:) Սակայն, այդ հնարավորության կիրառական զարգացմանն ուղղված պետական գործառույթները մեղմ ասած թերանում են, մասնավորապես Հայաստանը ցածր դիրք է գրավում մի շարք կարևորագույն ցուցանիշների գծով: Առանձնացնենք ՀՀ ինովացիոն ներուժի գնահատմանը խոչընդոտող հետևյալ գործոնները՝
- Հայաստանը ինովացիաների ոլորտում հիմնականում կենտրոնացած է դրանց գծով ինովացիոն ծառայությունների մատուցման և դրանց արտահանման վրա, սակայն հետինդուստրիալ հասարակարգում ինովացիոն զարգացումը պայմանավորված է բարձր արդյունավետություն ունեցող ինովացիոն արդյունաբերության զարգացմամբ: Արդյունքում, հայաստանյան բուհերը պատրաստում են որակյալ ծրագրավորողներ, սակայն թերանում են բարձրորակ ինժեներների պատրաստման գործում:
- Համաձայն Համաշխարհային ինովացիոն ինդեքսի՝ Հայաստանն իր եկամտային խմբում առաջատարներից է ինչպես դրանց ելքերի, այնպես էլ մուտքերի շարքում, սակայն դրանց հարաբերակցությունը հետ է մնում մյուս երկրներից, ինչը նշանակում է, որ Հայաստանում ինովացիոն ներուժը արդյունավետ չի օգտագործվում:

Վերոնշյալ խնդիրների վերհանմանը զուգահեռ աշխատանքում կարևորվել է մարդկային կապիտալի, կայացած աշխատաշուկայի ու մտավոր սեփականության դերը, որպես ինովացիոն ներուժի գնահատման հիմնախնդիրներ: Այսպես, մարդկային կապիտալը ինչպես ընկերության, այնպես էլ պետության ինովացիոն ներուժի և մրցակցային առավելության չափանիշն է, կարելի է փաստել, որ *մարդկային կապիտալի ուսումնասիրությունը անհրաժեշտ ենթապայման է արդյունավետ ինովացիոն քաղաքականության մշակման համար, իսկ արդյունավետ ինովացիոն քաղաքականությունն իր հերթին պետք է ենթադրի մարդկային կապիտալի ավելացմանն ու զարգացմանն ուղղված գործառույթներ ինովացիոն գործունեությունից ստացվող արդյունքի մաքսիմալացման համար*:

Սակայն, մարդկային կապիտալի զարգացման նպատակով կատարվող ներդրումները պետք է ուղեկցվեն նաև համապատասխան աշխատանքային հնարավորությունների ստեղծմամբ, հակառակ դեպքում նվազում է որակավորված

© National Library of Armenia

աշխատուժի արտադրողա-կանությունը և նրա ազդեցությունը տնտեսական աճի տեմպերի ավելացման վրա: Զարգացած շուկայական տնտեսությամբ երկրներում աշխատուժի անբարենպաստ ընտրությունից /adverse selection/ խուսափելու համար աշխատում են այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են ազդանշանները[9] /signaling/ և արտացոլումը[10] /screening/: Այսպես, ազդանշանային համակարգի կիրառման հետևանքով ՀՀ-ում հաստատվում է անբարենպաստ հիբրիդային հավասարակշռություն, որը մեր երկրի պայմաններում հանգեցնում է արտագաղթի: Արտերկիր մեկնող երիտասարդների մի զգալի մասը այլևս չի վերադառնում: Նմանատիպ հավասարակշռություն է հաստատվում նաև արտացոլման մեխանիզմների կիրառման արդյունքում: Այսպես, գործատուների կասկածը ՀՀ-ում կրթության որակի վերաբերյալ, երիտասարդ մասնագետների շրջանում հանգեցնում է գործազրկության մակարդակի աճին, քանի որ գործատուների կողմից թերի արտացոլման մեխանիզմների կիրառման արդյունքում առաջնությունը տրվում է ոչ թե երիտասարդներին, ովքեր պատշաճ կրթություն են ստացել, այլ նրանց, ովքեր ինչ-որ կերպ բավարարում են այդ մեխանիզմներին: Այս պարագայում, սոցիալական խնդիրներից դրդված շատ երիտասարդներ ընտրում են ոչ թե այն աշխատատեղը, որն առավելագույնս կնպաստեր նրան ինովացիոն ներուժի զարգացմանը և կիրառմանը, այլ ստիպված են լինում ընտրել առաջին իսկ առաջարկվող աշխատանքը: Արդյունքում, արտացոլման մեխանիզմների կիրառումը գործատուների կողմից հանգեցնում է երիտասարդ մասնագետների ունակությունների վատնմանը և գործում է ուղեղների արտահոսքի էֆեկտը[11]:

Այս երևույթների օգտին են խոսում վերջին տասնամյակներում որակավորված աշխատուժի միջազգային տեղաշարժի տվյալները, համաձայն որոնց 2012թ-ին արտասահմանում կրթություն է ստանում շուրջ 3.4 միլիոն ուսանող, ընդ որում Հս. Ամերիկան և Արմ. Եվրոպան միակ տարածաշրջաններն են, որտեղ օտարերկրյա ուսանողների զուտ ներհոսք է նկատվում՝ շուրջ 1.5 միլիոն ուսանող, որոնցից 500 հազարը միայն ԱՄՆ-ում: Ավելին, «Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության» (OECD) կողմից անցկացվող հարցման համաձայն[12], դոկտորական կոչում ունեցող մասնագետների 14%-ը զարգացող երկրներից տեղափոխվել է ԱՄՆ կամ Արմ. Եվրոպայի զարգացած երկրներ, իսկ մեկ այլ վերլուծության համաձայն[13]՝ 2011թ-ի տվյալներով 89 երկրների շուրջ 110 միլիոն միգրանտների 68%-ը բնակվում են Տնտեսական համագործակցության և զարգամաան կազմակերպության (OECD) անդամ զարգացած երկրներում:

Մտավոր սեփականության պահպանությունը ունի երկակի ազդեցություն տնտեսական համակարգի ինովացիոն ներուժի վրա: Մի կողմից, այս մեխանիզմի կիրառման արդյունքում կարող են ի հայտ գալ մոնոպոլիաներ, որոնք, կստանան

[9] Spence M. : "Job Market Signaling" –The Quarterly Journal of Economics, Vol. 87, No. 3. (Aug., 1973), pp. 355-374.
[10] Rothschild M., Stiglitz J.: "Equilibrium in Competitive Insurance Markets: An Essay on the Economics of Imperfect Information" — The Quarterly Journal of Economics, Vol. 90, No. 4 (Nov., 1976), pp. 629-649
[11] Beine M., Docquier F., Rapoport H.: "Brain drain and economic growth: theory and evidence" - Journal of Development Economics Vol. 64, 2001 p 275–289
[12] Auriol L.: "Careers of doctorate holders: employment and mobility patterns" – OECD STI WORKING PAPER 2010/4, p. 30
[13] Schaaper M. "The Human Factor in Innovation" - UNESCO Institute for Statistics report 2014, pp 69-74

© National Library of Armenia

մոնոպոլ շահույթ և այլևս խթաններ չեն ունենա նոր տեխնոլոգիաների մշակման համար[14]: Մյուս կողմից, ինովացիոն գործունեության արդյունքում ստացվող շահույթները պետք է բավականին մեծ լինեն, որպեսզի չեզոքացնեն անհաջող ինովացիաների փորձարկումից բխող կազմակերպությունների վնասները[15]: Այդ իսկ պատճառով, զարգացած երկրները հակված են կիրառել մտավոր սեփականության խիստ պահպանության սկզբունքը՝ խթանելով ինովացիոն զարգացման գործընթացները և երկարաժամկետ տնտեսական աճը[16]: Վերոնշյալ խնդիրների ամփոփումը հնարավորություն է ստեղծում **ՀՀ ինովացիոն ներուժի գնահատմանը խոչընդոտող համակարգային գործոնների** վերլուծման համար**:** Զարգացող տնտեսությամբ երկրներում մշտապես նկատվում է ֆինանսական ռեսուրսների պակաս, որի լրացման կարևորագույն աղբյուր են հանդիսանում օտարերկրյա ուղղակի ներդրումները[17]: Տնտեսության ինովացիոն հատվածի զարգացման հարցում նույնպես կարևորվում է ՕՈՒՆ-երի ներգրավումը, Ներկայումս նմանատիպ իրավիճակ է նկատվում ՀՀ-ում: Գծապատկեր 2.3.1-ում ներկայացված են զուտ օտարերկրյա ներդրումների մակարդակը ՀՀ-ում: Գծապատկերից երևում է, որ ՕՈՒՆ-երի 2005-2008թթ-ի ընթացքում գրանցած աճը վերափոխվել է նրանց նվազմամբ և 2014թ-ին զուտ ՕՈՒՆ-ները ՀՀ-ում կազմել է 382 մլն ԱՄՆ դոլար, այն պարագայում, երբ 2008թ-ին նրանց մակարդակը կազմում էր շուրջ 944 մլն. ԱՄՆ դոլար:



Գծապատկեր 2.3.1: Զուտ օտարերկրյա ներդրումների մակարդակը ՀՀ-ում ըստ 2005-2014թթ (Մլն. ԱՄՆ դոլար[18])

Այս հանգամանքը կապվում է երկրներում առկա համակարգային խնդիրների հետ, որոնք տարբեր դրսևորումներով առկա են գրեթե բոլոր զարգացող երկրներում, և որոնց լուծումները ինքնըստինքյան հանգեցնում են օրենսդրական և մակրոտնտեսական այնպիսի խնդիրների կարգավորմանը, ինչպիսիք են ինովացիոն գործընթացների

[14] Gilbert, R. J., Newey D.: "Preemptive Patenting and the Persistence of Monopoly" - American Economic Review 1982, 72, pp. 514-526.

[15] Lee, J. Y., Mansfield E.: "Intellectual Property Protection and U.S. Foreign Direct Investment" - The Review of Economics and Statistics 1996, 78, pp. 181-186.

[16] Ղանթարջյան Ս. <<Մտավոր սեփականության օբյեկտների առևտրայնացման հիմնախնդիրները ՀՀ-ում>> ԵՊՀ Տարեգիրք 2013, Տնտեսագիտության ֆակուլտետ, Եր.: ԵՊՀ հրատ. 2014, էջեր 542-546

[17] Ա. Թավադյան և ուրիշներ << Մակրոտնտեսական վերլուծություն, մոդելավորում և կանխատեսում>> - – Եր.: Տնտեսագետ, 2014 –76 էջ.-(«Ամբերդ» մատենաշար):

[18] Գծապատկեր 2.3.1-ը կազմված է հեղինակի կողմից data.worldbank.org էլ. կայքի տվյալների հիման վրա

© National Library of Armenia

զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայությունը, ինտելեկտուալ սեփականության պաշտպանությունը և այլն: **Այդպիսի համակարգային խնդիրներից կարելի է առանձնացնել.**

- *Ուղեղների արտահոսք:* որն ունի իր ուղղակի և անուղղակի պատճառներն, առանձնացնենք դրանցից մեր կարծիքով հիմնականները.

1.1 Արտագաղթի հիմնական սոցիալ-տնտեսական պատճառները, որոնք անուղղակի կերպով հանգեցնում են նաև մտավոր ներուժի արտահոսքին:

1.2 Աշխատաշուկայում առկա ազդանշանային համակարգի խափանումները,

1.3 Նորարարությունների կայացման համար անհրաժեշտ մատերիա-տեխնիկական և ֆինանսական միջոցների սակավություն:

- *Ինովացիոն արդյունքի նկատմամբ պահանջարկի խթանման պետական մեխանիզմների բացակայություն:*
- *Անկատար մրցակցային դաշտ և ստվերային տնտեսության մեծ ծավալներ:*



Գծապատկեր 2.3.2: ՀՀ ստվերային տնտեսության մակարդակի ժամանակային շարք 1999-2013թթ. ժամանակագրական շարք19

Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ ինովացիոն ներուժի գնահատման վրա ազդող գործոնների քանակական վերլուծությունը և ոլորտի զարգացման հնարավոր տեսլականը»**, գլխում նկարագրված է ՀՀ տնտեսության ինովացիոն հատվածի ժամանակակից պատկերը, դրա զարգացմանը խոչընդոտող կառուցվածքային ու համակարգային գործոնների քանակական վերլուծությունը, ինչպես նաև առաջարկվել է ոլորտի զարգացման հնարավոր տեսլականը ՀՀ տնտեսության կլաստերավորման միջոցով:

Ընդհանուր առմամբ Հայաստանում օրենսդրորեն բարենպաստ պայմաններ են ստեղծված օտարերկրյա ներդրողների համար, մասնավորապես՝ բացակայում են ընկերությունների կանոնադրական կապիտալում կատարվող ներդրումների համար գանձվող տուրքերի մեխանիզմը և շուկա մուտք գործելու օրենսդրական խոչընդոտները: Իսկ ՓՄՁ զարգացման ոլորտում, չնայած այն հանգամանքին, որ իրականացվող ծրագրերն ընդհանուր առմամբ դրականորեն են անդրադառնում փոքր և միջին բիզնեսի զարգացման համար, դրանք դեռևս բավարար չեն ՀՀ-ում տնտեսական զարգացման խթանման համար, ինչպես նաև դեռևս ստեղծված չեն փոքր գիտատար ընկերությունների զարգացումն ապահովող բավարար պայմաններ: ՀՀ-ում թեր են զարգացած նաև SS ոլորտում գործող ընկերությունների պետականորեն տրամադրվող աջակցության մեխանիզմները, որոնց բարելավման նպատակով անհրաժեշտ է հաշվի

[19] Տվյալները հաշվարկված են Schneider F.: "The Shadow Economy and Work in the Shadow: What Do We (Not) Know?" - Discussion Paper No. 6423, 2012, p. 73, առկա MIMIC մեթոդաբանության և www.armstat.am էլ. կայքում առկա տեղեկատվության հիման վրա

© National Library of Armenia

առնել, որ կատարված քանակական վերլուծության արդյունքում ստացված արդյունքների համաձայն որոնց կարելի է փաստել, որ ազգային ինովացիոն համակարգի առկայության պարագայում ինովացիոն և կրթության ոլորտում կատարված ներդրումները ավելացնում են երկրի ինովացիոն արդյունքները թողարկելու հնարավորությունը, որի պարագայում հնարավորություն է ընձեռվում երկրի ներսում պատրաստել բարձրորակ կադրեր, ինչպես նաև ավելացնել երկրում օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալները: Սակայն, չափազանց կարևոր հանգամանք է նաև երկրում սոցիալական կապիտալի՝ խոշոր ինստիտուտների նկատմամբ ունեցած վստահության, փոխօգնության և գիտելիքների փոխանցման մեխանիզմների առկայությունը, ինչպես նաև կոռուպցիոն երևույթների նկատմամբ բացասական վերաբերմունքի զարգացումը:

Սակայն, ինովացիոն գործունեության վրա ազդող գործոնների վերհանմանը զուգընթաց անհրաժեշտ է քանակապես գնահատել նաև ինովացիոն ներուժի զարգացման ազդեցությունը ինչպես տնտեսական աճի, այնպես էլ բնակչության տարբեր շերտերի կենսամակարդակի փոփոխման վրա, առավել արդյունավետ վերաբաշխման մեխանիզմներ կիրառելու նպատակով: Այս նպատակով աշխատության շրջանակներում կառուցված կոռելացիոն մատրիցում ներկայացված են ինովացիոն գործակիցների կոռելացիոն կապը տնտեսական աճի և եկամուտների բաշխվածության հետ: Կատարված վերլուծության արդյունքում *կարելի է փաստել, որ անկախ երկրի զարգացվածության աստիճանից ինովացիոն գործունեության ծավալների ավելացումը հանգեցնում է բնակչության եկամուտների աճի, սակայն մեծապես փոխվում է նաև բնակչության տարբեր շերտերին բաժին ընկնող եկամուտների մասնաբաժինները, ուստի ինովացիոն զարգացման ճանապարհին ընտրած երկրներում կարևորվում է ինովացիոն գործունեությունը խթանող հարկային քաղաքականությանը զուգահեռ եկամուտների վերաբաշխման մեխանիզմների առկայությունը:*

- Վերոնշյալ խնդիրների առկայությունը ՀՀ տնտեսության շրջանակներում պարտադրում է ինովացիոն քաղաքականության հիմքում դնել տնտեսության ավանդական համարվող ոլորտների զարգացման հարցն ու մրցակցային առավելություններ ստանալ հենց այս ոլորտների արդրականացման միջոցով: Այս նպատակով աշխատության շրջանակներում օգտագործվել է տնտեսագիտության գրականության մեջ հայտնի տնտեսության ճյուղերի կլաստերային տարանջատման վիճակագրական գործիքը[20] ՀՀ տնտեսության կառուցվածքը բնորոշող տնտեսական գործոնների և ատենախոսության 3.2 գլխում կատարված ռեգրեսիոն վերլուծության արդյունքում գնահատված ինովացիոն հատվածի զարգացումն ապահովող գործոնների վիճակագրական տվյալների հիման վրա: Այս նպատակով ընտրվել են տնտեսական ցուցանիշները որոնք նկարագրված են ատենախոսության հավելված 1-ում: Վերլուծության արդյունքում առանձնացվել է գյուղատնտեսության ոլորտը, որը ծրագրի կողմից ընդգրկվել է առաջին կլաստերում: Հետևաբար, կարճաժամկետ հատվածում նպատակահարմար է ինովացիոն տեխնոլոգիաների ներդրումը սկսել այս ոլորտից:
- Երկրորդ կլաստերում ընդգրկվել են կրթության, առողջապահության ու մշակող

[20] Наследов А. “SPSS 19: профессиональный статистический анализ данных”. — СПб.: Питер, 2011. — 400 с.

© National Library of Armenia

արդյունաբերության ոլորտները: Հաշվի առնելով այն, որ ՀՀ մշակող արդյունաբերության ոլորտի զարգացումը մեծապես կախված է գյուղատնտեսության զարգացման հետ (քանի որ այդ ոլորտում արտադրված արտադրանքում մեծ տեսակարար կշիռ ունի գյուղատնտեսական արտադրանքի վերամշակումը՝ միջինում շուրջ 27.5%[21]), ապա այս ոլորտի զարգացումները կարճաժամկետ հատվածում շաղկապվում են գյուղատնտեսության ոլորտի զարգացումների հետ: Ինչ վերաբերում է կրթության և առողջապահության ոլորտներին, ապա այս ոլորտներում ինովացիոն տեխնոլոգիաների ներդրումը մեծապես կբարձրացնի ՀՀ ինովացիոն ներուժի գնահատականը: Հաշվի առնելով այն, որ կրթության ոլորտում կատարվող բարեփոխումներն իրենց ազդեցությունն են թողնում նաև տնտեսության մյուս ոլորտների վրա, ապա այն նպատակահարմար է դիտարկել որպես ինովացիոն զարգացմանը օժանդակող, իսկ առողջապահության ոլորտը որպես զարգացման հիմնական ուղղություն:

- Առանձնացված երրորդ կլաստերն ընդգրկում է տեղեկատվական տեխնոլոգիաների ու ֆինանսական ծառայությունների ոլորտները: Այս ոլորտում ընթացող ինովացիոն գործընթացները թեև դրականորեն են անդրադառնում ինչպես տնտեսական աճի, այնպես էլ բնակչության կենսամակարդակի բարձրացման վրա, սակայն այս ոլորտները դեռևս չեն ընդգրկում բնակչության լայն շերտերը, հետևաբար գիտելիքի ու տեխնոլոգիաների տրանսֆերն այս ոլորտներում բավականին դանդաղ են ընթանում: Հենց այս պատճառով էլ այս ոլորտների զարգացումները մեծ ազդեցություն չեն թողնում ՀՀ ինովացիոն ներուժի գնահատականի վրա: Ուստի առաջարկվում է այս ոլորտները դիտարկել որպես ինովացիոն ներուժի զարգացմանը օժանդակող ոլորտներ, որոնցում մշակվող տեխնոլոգիաները զուգահեռաբար կներդրվեն տնտեսության մյուս ոլորտներում՝ առկա հիմնախնդիրների հաղթահարման նպատակով:

Տնտեսության մյուս ոլորտները վերլուծության արդյունքում ընդգրկվել են չորրորդ կլաստերում, որոնցում կատարվող կառուցվածքային փոփոխությունները կարճաժամկետ հատվածում չեն անդրադառնում ՀՀ ինովացիոն ներուժի գնահատականի վրա: Վերոնշյալ վերլուծության արդյունքները հաշվի առնելով՝ կարելի է առանձնացնել ՀՀ ինովացիոն ներուժի գնահատման հիմնախնդիրների վերացմանը առավելապես նպաստող գյուղատնտեսության և առողջապահության ոլորտները, իսկ որպես օժանդակ ճյուղեր կրթության ու տեղեկատվական տեխնոլոգիաների ու կրթության ոլորտները: Այս ոլորտների հետագա զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև հետևյալը՝

- Ինովացիոն միջավայրի զարգացման շարժիչ ուժ պետք է հանդիսանան ՀՀ-ում գործող խոշոր տնտեսվարող սուբյեկտները, քանի որ միայն այդ ընկերությունները ունեն համապատասխան մատերիա-տնտեսական հենք առկա տեխնոլոգիաների արդիականացման և ինովացիաների կրկնօրինակման համար:
- Ինովացիոն գործունեություն ծավալող խոշոր ընկերությունների սպասարկումը և գործունեության ընթացքում առաջ եկած խնդիրների օպերատիվ և արդյունավետ լուծումները օութսորսինգային պայմանագրերի հիման վրա վերագրվում են գործող փոքր գիտատար ընկերություններին:

[21] Տեղեկատվությունը վերցված է 2014թ. ՀՀ վիճակագրական տարեգրքից (www.armstat.am)

© National Library of Armenia

- ՀՀ պետական մարմինների հիմնական խնդիրը պետք է հանդիսանա ՀՀ և օտարերկրյա խոշոր ընկերություններին միավորված ներդրումային ծրագրերի շուրջ համախմբումը ։

Աշխատության «**Եզրակացություններ և առաջարկություններ**» բաժնում ներկայացված են հետազոտության արդյունքում բացահայտված հիմնախնդիրներն ու դրանց լուծման ուղղությամբ մշակված առաջարկությունները։ Դրանցից առանձնացրել ենք հետևյալները՝

1. Ուսումնասիրությունները վկայում են, որ ՀՀ զարգացման տնտեսական քաղաքականությունն այլևս պետք է նպատակաուղղված լինի ՀՀ ինովացիոն ներուժի գնահատման հիմնախնդիրների լուծմանը, մասնավորապես *միջազգային հեղինակավոր հնստիտուտների կողմից մշակված մեթոդաբանության համաձայն ՀՀ ինովացիոն ներուժի գնահատականի հիմքում ընկած հոդվածների մի մասը համապատասխանեցնել ՀՀ տնտեսության ներկա իրավիճակին*, քանի որ ՀՀ ինովացիաների ոլորտի զարգացումներն հիմնականում կենտրոնացած են որակյալ ծրագրավորողների կողմից ինովացիոն ծառայությունների մատուցման և դրանց արտահանման վրա, իսկ բարձր տեխնոլոգիաների ուսումնասիրություն, կրկնօրինակում ու ներդրում դեռևս չի իրականացվում, ինչպես նաև հնարավորություններ չեն ստեղծվում ինժեներների պատրաստման համար։

2. Ազգային ինովացիոն համակարգի կայացումը դիտարկել որպես ՀՀ տնտեսության ինովացիոն հատվածի զարգացման ենթապայման, ինչն իրենից ենթադրում է պետական և մասնավոր ոլորտների խիստ համագործակցություն, որի շրջանակներում պետք է ապահովվի մրցակցային ձեռնարկատիրական դաշտի առկայություն, կամ պետական խիստ վերահսկողություն ինովացիոն ոլորտում գործող խոշոր ընկերությունների և ստացված արտադրանքի որակի նկատմամբ հայրենական շուկայում ներմուծման փոխարինման և արտահանման խթանման նպատակով։

3. Խթանել ինովացիոն տեխնոլոգիաների ներդրումը տնտեսության այն ոլորտներում, որտեղ նրանց օգտագործման արդյունավետությունը կլինի առավել բարձր և կնպաստի ՀՀ սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը և աշխատուժի արտահոսքի կանգնեցմանը։

4. Ապահովել եկամուտների վերաբաշխման մեխանիզմների գործունեությունն այնպես, որ ինովացիոն տեխնոլոգիաների ներդրման արդյունքերը ուղղեն ինչպես տնտեսության հեռանկարային ճյուղերի զարգացմանը, այնպես էլ տարածաշրջանային հավասարաչափ զարգացման ծրագրերի իրականացմանը, քանի որ անկախ երկրի տնտեսության զարգացվածության աստիճանից, ինովացիոն հատվածի զարգացումը բարձրացնում է բնակչության կենսամակարդակը, որին համահունչ ավելանում է նաև եկամուտների կենտրոնացվածության մակարդակը տնտեսության առանձին ոլորտներում ու բնակչության առանձին խավի ձեռքում։

5. Զարգացած երկրների տնտեսական աճն ապահովող գործոնների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ կայուն զարգացող ազգային ինովացիոն համակարգ ստանալուն նպատակաուղղված պետական քաղաքականության հիմքում պետք է ընկած լինեն՝

- *Ինովացիոն ոլորտի զարգացման նպատակով հաջող կիրառություն ստացած*

© National Library of Armenia

ռազմավարություններն ու միջազգային փորձը, որի ուսումնասիրության արդյունքում կարելի է տարանջատել տնտեսության ինովացիոն միջավայրի զարգացման երեք եղանակ, որոնք տարբերվում են պետական միջամտության ինտենսիվությամբ:

- Ամբողջ բնակչության կազմում ինովացիոն գիտելիքները յուրացնող անհատների տեսակարար կշռի աճը, նպաստում է տնտեսության ինովացիոն զարգացման գործընթացի արդյունավետությանը:
- Ինովացիոն տեխնոլոգիաների արտադրության համար որակավորված աշխատուժի, քանակական աճը նպաստում է տնտեսական աճի տեմպի ավելացմանը :
- Տնտեսական աճի վրա պետական ինովացիոն քաղաքականությունն ունի միայն կարճաժամկետ ազդեցություն, սակայն այն անհրաժեշտ է գիտելիքների հասանելիության ապահովման և ինովացիոն հետազոտությունների ընդունելի ուղղություններ սահմանելու համար:
- Ինովացիոն զարգացման երկու ուղղություններից՝ ուղղահայաց և հորիզոնական, արտադրվող տեխնոլոգիաների տեսականու ավելացումը նպատակահարմար է զարգացման սկզբնական շրջանում:
- Փոքր գիտատար ընկերությունները հանդիսանում են ինովացիոն հատվածի զարգացման հիմքը, նույնիսկ ստեղծմանը, այնուհետև, մրցակցային պայմաններ և բավարար սպառողական շուկա ստեղծելով, ապահովի նման ընկերությունների խոշորացմանը, ինչն իր հերթին կհանգեցնի տնտեսության զարգացմանն ու բնակչության մեկ շնչին բաժին ընկնող եկամուտների աճին:
- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նոր տեխնոլոգիաները ստեղծվում են արդեն իսկ առկա տեխնոլոգիաների միջոցով, ուստի ինովացիոն ոլորտի զարգացումը պետք է զուգորդվի տնտեսության ավանդական ճյուղերի զարգացմամբ և այս ճյուղերում ինովացիոն տեխնոլոգիաների ներդրմամբ:
- *Ինովացիոն ոլորտի զարգացման վրա ազդող գործոնների քանակական վերլուծության արդյունքները:* Կառուցված պանելային-ռեգրեսիոն հավասարումների շնորհիվ դուրս է բերվել այն տնտեսական ու սոցիալական գործոնները, որոնք արդյունավետ կերպով նպաստում են ինովացիոն տեխնոլոգիաների արտադրությանը: Այսպես, կրթության և ինովացիոն զարգացման ոլորտում պետական ներդրումների աճը բոլոր դեպքերում դրականորեն է ազդում ոլորտի զարգացման համար, միջնաժամկետ հատվածում դրական ազդեցություն ունի նաև ոլորտում զբաղված գիտնականների և սպասարկող անձնակազմի քանակի աճը և զուտ օտարերկրյա ներդրումների ծավալների ավելացումը: Ինովացիոն զարգացման գործընթացի վրա ազդող սոցիալական գործոններից անհրաժեշտ է առանձնացնել սոցիալական կապիտալի մակարդակը, կոռուպցիոն երևույթներից բխող անորոշության միջավայրը և մտավոր սեփականության պահպանությունը, ինչպես նաև բնակչության կյանքի որակի բարելավումը:

6. Խթանել գյուղատնտեսության տարբեր ոլորտներում գործող ագրոբիզնեսի խոշոր ներկայացուցիչների կողմից վերամշակված գյուղատնտեսական արտադրանքի արտահանման համատեղ բիզնես ծրագրերի իրականացումը մեկ խոշոր արտահանող ընկերության ստեղծման միջոցով: Շահութաբերության մակարդակի բարձրացման ակնկալիքով այս ընկերությունների կողմից տնօրինվող ակտիվների ու մարդկային

© National Library of Armenia

կապիտալի զարգացման հնարավորությունների օգտագործումը ամրապնդել նաև ներդրողների շահերի արդյունավետ պաշտպանության, բանակցությունների և համագործակցության արդյունքում նոր շուկաների մուտքի ապահովման միջոցով:

7. Անցկացնել գյուղատնտեսության ոլորտում ինովացիոն տեխնոլոգիաների ներդրման պիլոտային ծրագրեր ՀՀ տարբեր մարզերում, որի շրջանակներում՝ արտադրական ծախսերի կրճատման և մասշտաբի էֆֆեկտի օգտագործման նպատակով՝ գյուղացիական տնտեսությունների ակտիվների համատեղման միջոցով կստեղծվեն առանձին կոլեկտիվ կերպով կառավարվող ընկերություններ, որոնք կունենան համապատասխան կրթությամբ խորհրդատուներ ու ֆինանսական ծառայություններից օգտվելու արտոնություններ:

8. Պիլոտային ծրագրերի արդյունքները հասանելի դարձնել բնակչության առավել լայն շերտերին, միաժամանակ իրականացնել կրթական բարեփոխումներ ու տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում գյուղատնտեսական գործընթացներում:

9. Միջազգային առողջապահական ծրագրերի հետ համագործակցության արդյունքում բժշկական հաստատությունների արդիականացում և ինովացիոն տեխնոլոգիաների ներդրման համար անհրաժեշտ հենքի ստեղծում

10. Ինչպես առողջապահության, այնպես էլ գյուղատնտեսության ոլորտում կրթական համակարգի կատարելագործում ու գիտական լաբորատորիաների և կենսաքիմիայի ոլորտում գիտահետազոտական կենտրոնների հիմնում ու արդիականացում:

Քայլերի նշված հաջորդականությամբ կիրառումը դրականորեն կանդրադառնա ՀՀ ինովացիոն ներուժի գնահատման և օգտագործման համար՝ վերացնելով ոլորտում առկա հիմնախնդիրները և ապահովելով բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման համար անհրաժեշտ նախապայմանները:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝

1. Պողոսյան Վ. <<Ինովացիոն ներուժի համեմատական վերլուծությունը և կարգավորման ուղիները ՀՀ-ում>> - <<Ֆինանսներ և էկոնոմիկա>> հանդես, N11-12 (161-162) 2013թ. 108 էջ, էջ 12-14
2. Պողոսյան Վ. <<ՀՀ ինովացիոն ներուժի զարգացմանը խոչընդոտող համակարգային գործոնները>> - <<Ֆինանսներ և էկոնոմիկա>> հանդես, N3 (165) 2014թ. 114 էջ, էջ 78-80
3. Պողոսյան Վ. <<Ինովացիոն ներուժի զարգացման ազդեցության գնահատումը տնտեսական աճի և եկամուտների բաշխվածության վրա>> - <<Ֆինանսներ և էկոնոմիկա>> հանդես, N9-10 (181-182) 2015թ. 132 էջ, էջ 58-62
4. Պողոսյան Վ. <<Ազգային ինովացիոն համակարգի կայացումը՝ որպես գյուղատնտեսության ոլորտի զարգացման տեսլական>> - <<Ագրոգիտություն>> գիտական ամսագիր, N9-10 (685-686) 2015թ. 77էջ, էջ 359-363
5. Պողոսյան Վ. <<Ինովացիոն ներուժի զարգացման վրա ազդող գործոնների տեսական ու քանակական վերլուծություն>> - <<Բանբեր>> Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարանի, N4 (40) 2015թ. 176էջ, էջ 93-104

© National Library of Armenia

Погосян Ваагн Рафаелович

ПРОБЛЕМЫ ОЦЕНКИ ИННОВАЦИОННОГО ПОТЕНЦИАЛА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – "Экономика, управление хозяйством и его сферами".

Защита диссертации состоится 12–го Мая 2016г. В. 14^{00} часов, на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете, по аддресу: 0025, г. Ереван, ул. Налбандяна 128

РЕЗЮМЕ

Структурные изменения в мировой экономике и тенденции в области решения экономических проблем с использованием новых технологий особенно ускорились с начала 90-х годов 20-ого века. Бурное развитие компьютерных технологий обеспечило устойчивое ускорение темпов экономического роста в странах с развитой экономикой. Уже с начала 21-го века обобществление новых технологических процессов создало возможность для технологической модернизации экономики Республики Армения. В то же время диверсификация экономики и развитие ее новых отраслей являются одним из наиболее важных проблем в странах с переходной экономикой. Поэтому важно долгосрочное техническое развитие национальной инновационной системы, способствующей эффективному осуществлению последовательного экономического роста.

Основная цель и задачи исследования. Основной целью исследования является выявление инновационного потенциала Республики Армения и раскрытие проблемы его оценки. Для достижения поставленной цели в работе решены следующие задачи:

- Изучить и оценить роль инновационного потенциала в моделях экономического роста.
- Анализировать международный опыт оценки и развития инновационного потенциала.
- Исследовать методы оценки инновационного потенциала и дать сравнительную оценку инновационного сектора экономики Республики Армения.
- Исследовать структурные и системные факторы, препятствующие развитию инновационного сектора экономики Республики Армения.
- Выявить факторы, содействующие развитию инновационного потенциала и с использованием экономико-математических методов дать количественную оценку их

© National Library of Armenia

воздействия.

- Исследовать современное состояние инновационного сектора экономики Республики Армения, а также обеспечивающих его законодательную и правовую базу.
- Провести классификацию отраслей экономики Республики Армения с учетом приоритетности и целесообразности развития в них инновационного потенциала.
- Дать возможное видение развития инновационной сферы и становления национальной инновационной системы Республики Армения.

Научная новизна исследования. Среди ряда результатов, полученных автором в ходе проведенных в работе исследований и анализов, в качестве научной новизны необходимо выделить следующие:

- На основе исследования международного опыта выявлены три подхода инновационного развития стран и обоснована необходимость построения национальной инновационной системы Армении в соответствии с выбранным подходом с адаптацией к местным реалиям моделей эндогенного экономического роста и результатов проведенного количественного анализа.
- С использованием эконометрических моделей дана количественная оценка факторов, влияющих на инновационный потенциал, и показано влияние инновационного потенциала страны на различные доходные группы населения и распределение доходов.
- На основе анализа причинно-следственных связей, лежащих в основе препятствующих развитию инновационного потенциала РА системных и структурных факторов, предложены механизмы их преодоления.
- Обоснована первостепенность устранения проблем оценки инновационного потенциала по выделенным отраслям в результате кластерного анализа экономики РА и составлено возможное видение повышения эффективности использования инновационного потенциала РА.

Теоретическая и практическая значимость результатов исследования состоит в возможности использования теоретических выводов и практических рекомендаций органами законодательной и исполнительной власти Республики Армения во время разработки стратегии инновационного развития страны.

© National Library of Armenia

Vahagn Rafael Poghosyan

PROBLEMS OF ASSESSMENT OF INNOVATION POTENTIAL OF REPUBLIC OF ARMENIA

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.02 – "Economics, Management of Economy and its Spheres".

The defense of the thesis will take place on May 12, 2016 at 14^{00} o'clock, at 014 Council of Economics of SCC RA at Armenian State University of Economics: 128 Nalbandyan str., Yerevan, Armenia, 0025.

ABSTRACT

The Process of structural changes in the global economy and the tendency to address economic issues based on the application on new technology have intensified since the early 1990s of the last century, in particular. The rapid development of computer technologies has steadily intensified the economic growth trends in the advanced economies. Since the beginning of the 21st century widespread application and use of new technology of has created an opportunity for the technical modernization of the economy of the Republic of Armenia. Meanwhile, economic diversification and the development of new sectors of the economy are some of the most important issues in countries with transitional economies. Therefore, it is important to facilitate the process of building the national innovation system of Armenia over the long-run, which would lead to ensuring long-term and sustainable economic growth.

The main purpose of the study is – to identify the innovation potential of the Republic of Armenia and the issues related with its assessment. In order to meet the objectives it is important to address the following problems:

- To review and evaluate the role of innovation potential in widely known economic growth models of;
- To analyze the best practices of the assessing and developing innovation potential;
- To study the methods of estimating the innovate potential and make a comparative analysis of the innovation sectors of the economy of the Republic of Armenia and other nations;
- To investigate the structural and systemic barriers preventing the development of innovative sector of the economy of the Republic of Armenia;
- To carry out a quantitative analysis of the impact of factors ensuring the development of the innovation potential, by applying quantitative methods in economics;
- To study the current stance of the innovation sector of the Republic of Armenia, and the legal framework regulating the sector, as well;
- To classify the sectors of the economy of the Republic of Armenia according to the

© National Library of Armenia

priorities and expediency of development of innovative potential in them;

- To define the best vision for the development of the innovation sector and the National Innovation System in the Republic of Armenia.

The main scientific novelty: Among the number of results obtained by the author in the course of the research and analysis, as scientific novelty it is necessary to distinguish the following:

- Based on the analysis of the best practices worldwide three scenarios of innovative development of countries have been identified, and the need for building a national innovation system of Armenia according to the selected scenario, adaptation of endogenous economic growth models to the realities of the Armenian economy and the estimation results have been justified;
- The factors that significantly affecting the innovation potential has been identified based on the estimation of regression equations, and the impact of innovation potential on various income groups and income inequality have been estimated;
- Based on the cause and effect relationships of systemic and structural factors hindering the development of innovation potential mechanisms to address these obstacles have been proposed;
- Based on the cluster analysis of industries of the economy of the Republic of Armenia the need for addressing the innovation potential measurement issues has been justified, and mechanisms and measures to increase the innovative potential of the selected industries have been proposed.

Theoretical and practical significance of the study results is the ability to use the theoretical conclusions and practical recommendations by the legislative and executive authorities of RA in the elaboration of innovative development strategy of the country.

© National Library of Armenia